

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈԴՎԱԾԷ՛ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Միայն վերջերս ընթերցող ու գիտական հասարակայնությանը հնարավորություն ընձեռնվեց ծանոթանալու ականավոր պատմաբան, բյուզանդագետ, քանասեր Նիկողայոս Ադոնցի բազմաթիվ ստեղծագործական հարուստ ժառանգության կողմերից մեկին՝ հայկական հարցին նվիրված նրա աշխատություններին:

Դեռևս 1947 թ. Ն. Ալիևյանն իր «Ռուսոցչապետ Նիկողայոս Ադոնց» հոդվածում՝ մատնանշել էր հայկական հարցին նվիրված պատմաբանի անգլերեն լեզվով հրատարակած մի ուսումնասիրություն², որը, սակայն, իրերի հասկանալի քերուժով, երկար ժամանակ մատչելի չէր մեր հասարակայնությանը: 1984 թվականին պրոֆ. Ջ. Ա. Կիրակոսյանի համառոտ, սակայն խիստ շահեկան առաջաբանով լույս տեսավ այդ գրքի ռուսերեն թարգմանությունը, սակայն, ընդամենը 150 օրինակ և միայն պաշտոնական օգտագործման համար³: Արժեքավորելով նշված գրքի նշանակությունը հայկական հարցի գիտական ուսումնասիրության բնագավառում՝ Ջ. Կիրակոսյանը միաժամանակ նշում էր, որ այն այդ խնդրին նվիրված Ն. Ադոնցի միակ աշխատությունն է՝ Սակայն հետագա պրպտումները ցույց տվեցին, որ այս տեսակետը կարոտ է ամբողջական վերանայման: Նախ պարզվեց, որ 1918 թ. մարտ—մայիս ամիսներին Ն. Ադոնցը հայկական հարցին նվիրված երկու հոդվածներ է տպագրել պետրոգրադյան ռուսական խիստ հեղինակավոր պարբերականներում⁴, ուստի և Լոնդոնում տպագրված գիրքը պատահական փայլատակում չէր պատմաբանի հետաքրքրման հրուսումնասիրությունների ուղեծրում: Պարզապես մենք շատ վատ գիտենք Ադոնցի կենսագրության 1918—1920 թթ. ժամանակահատվածի մանրամասները: Սակայն, արդեն այսօր կարելի է հաստատապես ասել, որ Պետրոգրադի համալսարանի հաստիքային պրոֆեսորը, աշխարհի լավագույն բյուզանդագետներից մեկը, գրեթե ամբողջությամբ իրեն նվիրել էր իր ժողովրդի սրբաբար դատի պաշտպանությանը աշխատանքներին: Իր հայ պաշտոնակիցներից շատերի մեծն նա չմնաց կողքից անտարբեր դիտողի դերում, այլ իրեն հատուկ թծախնդրությամբ ու եռանդով լծվեց ձեռնարկվող աշխատանքներին (օրինակ՝ քրեստ-լիտովկայան քանակցություններում հայկական թղթածրարի պատրաստում, վիճակագրական տվյալների հավաքում, օրակարգային հոդվածների հրատարակում, հրապարակային դասախոսություններ և այլն): Նույնն էր կացությունը նաև արտասահմանյան տարագրությունում՝ նախ Լոնդոնում, սուպա Փարիզում: Այս տեսակետից խիստ շահեկան է Հայոց Ազգային պատվիրակության փոխնախագահ Գ. Նորատուրկյանի վերջերս հայտնաբերված 1921 թ. դեկտեմբերի 3-ի ուղերձը Ն. Ադոնցին, որի բովանդակությունը ցուցում է, թե պատմաբանի հայտնվելը Եվրոպայում երբեք էլ պատահական չէր և չէր հետապնդում որևէ քաղաքական (հայկա-

¹ Տե՛ս Ն. Ալիևյան, Ռուսոցչապետ Նիկողայոս Ադոնց, «Հանդես ամսօրյա», 1947, մայիս, էջ 311—318:

² N. Adoncz, Towards the solution of the Armenian question, London, 1920, 95 p.

³ Տե՛ս Н. Адонц, К разрешению армянского вопроса. «Арменоведение за рубежом», серия III, № 7, Ереван, 1984, 75 стр. նույնը հայերեն՝ Ն. Ադոնց, Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989, 116 էջ (անգլերենից թարգմանեց և հրատարակության պատրաստեց Վ. Ա. Դիլոյանը):

⁴ Н. Адонц, К разрешению..., с. 3, հմտ. նաև՝ «Սովետական Հայաստան», ամսագիր, 1985, № 8, էջ 12—13:

⁵ Տե՛ս Н. Адонц, Турецкая нота и турецкая Армения. «Новая жизнь», газета СІВ, 24 мая, 1918, № 2. О. Оганесян, Малоизвестная статья «Турецкая нота и турецкая Армения» Н. Адонца.— «Լրաբեր» ՀԳԱ (հասարակ. գիտ.), 1990, № 4, էջ 72—77.

Н. Адонц, Армянский вопрос и германские планы, «Международная политика и мировое хозяйство», СІВ, 1918. № 3, էջ 3—17:

համայնվար) միտում, տեսակետ, որը կիսապաշտոնական շրջանառություն ուներ խորհրդահայ պատմագիտության մեջ: Ավելորդ չենք համարում այդ ուղերձը մեջ բերել ամբողջությամբ.

«Մեծայարգ Տեար,

Լ՛րեր ազգային դատին կապուած ինչ-ինչ իրաւաբանական խնդիրներ սերտելու եւ պատրաստելու համար, Ազգային Պատուիրակութիւնս հարկ տեսաւ իրեն գործակից առնել իրաւագետ-խորհրդականներու Յանձնախումբ մը:

Ժանուցանելով Ձեր Ազնութեան, թէ անդամ Աշանակուած եք սոյն Յանձնախումբին, Պատուիրակութիւնս մեծ յոյս ունի, որ չէք զլանար Ձեր փորձուած կարողութեան եւ արժանեաց Ապաստը բերել այս առթիւ իր աշխատութեանց»⁶:

Փարիզյան տարագրության առաջին ժամանակաշրջանին եմ վերաբերում հայկական հարցին Ալիբաձե Ն. Աղոնցի մի քանի այլ հոդվածներ, ակնարկներ և դիտողություններ ևս, որոնք բացի մեկից⁷, մեզ անհայտ պատճառներով, չեն տպագրվել և ձեռագիր վիճակում գտնվում են նրա բեյրության հարուստ արխիվում: Սույն արխիվը հայտնաբերվել է միայն վերջերս և նրա մասին ընդհանուր գաղափար կարելի է կազմել յույս տեսած տեղեկատվության միջոցով⁸: Միայն Աշանց, որ Ն. Աղոնցի գիտական ժառանգությանը զբաղվողներին և հետաքրքրվողներին սպասում է հաճելի անակնկալ և ոչ միայն նրանց:

Արխիվում պահվող նյութերի մեջ զգալի են հայկական հարցին, հայ ազատագրական շարժումներին Ալիբաձե էջերը: Դրանք բազմաթիվ են և բազմաբնույթ: Այս ամենը վկայում է նաև, թե որքան խորությամբ է դրանց հեղինակը զբաղվել հայկական հարցով, որքան է նա ապրել ու ցավել իր ժողովրդի ճակատագրով: Եղած նյութերի մեջ կառանձնացնելից «Խորհրդային Հայաստանը և հայկական գաղթավայրերը» (անգլերեն՝ 18 էջ, հայերեն՝ 19 էջ), «Հայկական հարցը Սևրում» (ռուսերեն՝ 20 էջ), «Հայկական հարց» (հայերեն՝ 16 էջ), «Հայ ազատագրական շարժումները 1547—1711 թթ.» (հայերեն՝ 10 էջ), «Պետրոս Մեծի և Օրու քանակցությունները» (հայերեն՝ 18 էջ) հոդվածները և առանձնապես «Առաջավոր ասիական խնդրի լուծման շուրջ» ավարտուն ուսումնասիրությունը (ռուսերեն՝ 115 էջ) և այլն: Ինչպես վկայում է բերված ոչ լրիվ տեղեկատվությունը, հայկական հարցի ուսումնասիրությունը Ն. Աղոնցի համար պատահական ու դիպվածային հրատարակված չէր: Կարծում ենք, հետագա պրպատումները կհայտնաբերեն աղոնցյան նորանոր մատուցներ, պրպատումները հատկապես արդյունավետ կարող են լինել 1918—1920 թթ. պետրոգրադյան և 1921—1930 թթ. փարիզյան ուսական մամուլում:

Ապագային թողնելով Աղոնցի Աշանցի աշխատությունների մանրամասն վերլուծությունը, միայն Աշանց, որ դրանք ունեն պատմագիտական անուրանալի արժեքներ և առայսօր չեն կորցրել իրենց թարմությունն ու այժմեականությունը:

Ն. Աղոնցի այդ աշխատությունների շարքին է պատկանում նաև ստորև ընթերցողների ուշադրությանը ներկայացվող «Հայկական հարցի ներքին կողմերից մեկը» հոդվածը: Ամենայն հավանականությամբ այն գրվել է 20-ական թվականների կեսերին, ըստ երևույթին, Հոգանի կոնֆերանսից (1922—1923) անմիջապես հետո և լավագույնս ցուցում է հայ մեծ ստածողի ու քաղաքացու մտահոգությունները հարստացած ժողովրդի քախտի ու ճակատագրի վերաբերյալ:

Հրատարակվող հոդվածի ինքնագիրը պահվում է Համազգայինի Բեյրութի գրական պահոցի Նիկողայոս Աղոնցի ֆոնդում (տե՛ս պահարան I, գրոց Բ, թղթածրար 6): Բնագիրը հրատարակվում է նույնությամբ, որոշ անհրաժեշտ կետադրական միջամտություններով:

Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

⁶ Տե՛ս Համազգայինի Բեյրութի գրական պահոց, պահարան I, գրոց Ե, թղթածրար Ա—8 (ընդգծումը մերն է— Պ. Հ.):

⁷ N. Adoncz, Kurdish intrusion into Armenia, տե՛ս «The New Armenia», New York, 1922, vol. 14, N 1, էջ 4—6, տե՛ս նաև սույն հոդվածի Գ. Ասատրյանի հայերեն թարգմանությունը՝ «Երեկոյան Երևան», օրաթերթ, 1990, 20 մարտի, էջ 3—4:

⁸ Տե՛ս «Ազդակ», օրաթերթ, Բեյրութ, 1993, 9 մարտի, № 4, էջ 4, 7, «Ազատամարտ», շաբաթաթերթ, Երևան, 1993, 8—15 ապրիլի, № 14, էջ 13, «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, Երևան, 1993, 7 մայիսի, № 89, էջ 2—3, «Երկիր», օրաթերթ, Երևան, 1993, 11 մայիսի, № 86, էջ 5:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՆԵՐՔԻՆ ԿՈՂՄԵՐԻՑ ՄԵԿԸ

Հայկական հարցը իբր քաղաքական դատ երկու կողմ ունի, երկու ազգակ' ներքին և արտաքին: Ներքին նմ անվանում այն ամենը, ինչ որ բխում է հայերից, այն շանքերն, որ անում ենք մենք՝ հայերս գործի հաջողության համար, և արտաքին՝ շահագրգռված պետությունների և կամ նրանց դիվանագետների դիրքն ու տրամադրությունները:

Մեր ազգային պարտքը կատարած կլինենք և ապագա պատասխանատվությունից ազատ միայն այն դեպքում, եթե կարողանանք ասել, որ մենք՝ հայերս, մեր կողմից աշխատեցինք և արինք այն, ինչ որ պահանջում էր բուպեն, և սպառեցինք բոլոր հնարավոր միջոցները: Մեզ թվում է, թե որքան էլ շատ բան արած լինենք, տակավին անելիք ունենք և մեծ անելիք: Մեր դատը բարդ է և պահանջվում է տեսակ-տեսակ փաստարկություններ: Մի կարգի պատճառաբանություն այն, որ մինչև այժմ հիմն եղել և կա հայ դատի պաշտպանություն, ստացած է իր լիակատար ամբողջությունը: Նշանախեց անգամ չի կարելի ավելացնել, առանց տարտամ կրկնաբանությանց երկյուղի, եթե գործը կմնա, իհարկե, նույն ձեռքերում, որ մինչև այժմ վարել և վարում են:

Այն անձինք և հաստատություններն, որոնք կոչված են պաշտպանելու հայ դատը ի պաշտոնե և կամ անպաշտոն, որոշ կուսակցական և հասարակական խավերի ներկայացուցիչներ են: Ինչպես և կոչվեն այն կուսակցություններն, որ այսօր հրապարակի վրա գործուն դեր են կատարում, ինչ և լինեն նրանց ծրագրային և էական տարբերություններն, նոքա բոլորեքյան հասարակական տեսակետից միևնույնն են, քանի որ բոլորն էլ միևնույն միջին դասակարգի կամ քաղքենիության և նրա համապատասխան մտավորականության հայտարարներն են, որոնց մտայնությունը կարելի է բնորոշել ընդհանուր առմամբ վարժապետություն բառով: Գործ եմ ածում այդ բառը ոչ հեզնական, այլ վեհ իմաստով: Դրա ներկայացուցիչներն են հայ մտքի և լեզվի, հայ մտավոր անդաստանի սպասավորներն, որ այսօր կանգնած ծվրուպական պետությանց առաջ պաշտպանում են հայ դատը: Որքան էլ կարող, որքան էլ հմուտ և անձնվեր լինեն իրենց կոչման մեջ, բնական է, որ իրենց իսկ մտայնությամբ, ի վիճակի պիտի շլինեն գրկել դատի պահանջած փաստարկությունց ամբողջությունը, նրանց պաշտպանությունը լինելու է միշտ միակողմանի:

Ամեն պետության, ամեն ազգի մեջ գործուն դեր է խաղում բարձր՝ նյութական և մտավորական իմաստներով հառաջացած դասակարգը: Արդի ժամանակները բուրժուական հասարակության գերիշխանության դար է, և այս հիմունքով արտաքին քաղաքականությունն իսկ ոչ այլ ինչ է, եթե ոչ սնտեսական շահերի մրցման արտահայտություն: Բնական է, որ այսօրինակ քաղաքականության հիմնագիծը և նրա բեկվածները ըմբռնել և շահավետել կարող են ավելի շուտով բուրժուական մտայնության ունակները, քան մի ուրիշ:

Տխուր փաստ է, որ հայի նյութական և մտավոր հարստությունը, այլ խոսքով նրա բուրժուական դասը հայրենիքից դուրս է՝ սփռված ամենուրեք օտար աշխարհներում: Հայ ազգ և հայ հայրենիք՝ հավասար դադափարներ չեն: Մեր հայրենիքն ավելի հետամնաց է, քան ազգը: Մեր երկիրը հազիվ հասած է զարգացման քաղքենիության աստիճանին: Մինչդեռ հայրենի հողից դուրս ունենք խոշոր բուրժուազիա, բառի բուն իմաստով, մի բուրժուազիա, որ երբեմնակի տալիս է եվրոպական մեծության ներկայացուցիչներ: Հայերն հայտնի են առևտրի և արդյունաբերության աշխարհում: Քաղաքական պայ-

մանները շնորհիվ վտարվելով հայրենիքից՝ հայ հանճարը հարկադրված թա-
ռել է օտար շահաստաններում և համաշխարհային հռչակ է վաստակել: Այդ
հռչակը նոր չէ: Տակավի՛ր դարեր առաջ հայը սլաւոսլաւեր անդ է գրավել այն
ժամանակվա առևտրական ծաղկյալ կենտրոններում և բացատրիկ օղակ է եղել
Արևելքի և Արևմուտքի առևտրական և միջև իսկ քաղաքական հարաբերու-
թյանց: Միայն բարբերի փարիսեցիներին է հատուկ խեթ աչքով նայել հայի
վաճառականական ձիրքերի վրա: Ժամանակակից քաղաքակրթության ազդակ-
ներից մինն է վաճառականությունը և հայի դերը եվրոպական վաճառակա-
նության պատմության մեջ դեռ սպասում է իր առանձին պատմաբանի: Ար-
դի ժամանակներում ևս ականատես ենք հայի շինարար գործունեության հայ-
րենիքից դուրս տարբեր վայրերում, ուր նա հիմնել է փարթամ գաղութներ,
նյութական և մտավոր հարստությանց կատարյալ շտեմարաններ: Պետք չէ
մոռանալ, որ Թիֆլիսն ու Բաքուն և կամ Պոլիսը ևս գաղթավայրեր են: Եթե
աչք ածենք արտասահմանի հայության՝ հին և նոր աշխարհների կենտրոն-
ներում խմբված մեր ուժերին, կարող ենք պնդել, որ եթե հայ հայրենիքը աղ-
քատ է, սակայն այդպես չէ հայ ազգը, հայ հայրենիքը՝ տգետ և հետամնաց,
բայց այդպես չէ հայ ազգը, հայ հայրենիքը՝ տգետ և հետամնաց,
Բրիտանական կղզու վրա չէ, այնպես և հայի կարողությունները միայն Երե-
վան, Վան և Բիթլիս որոնելու չէ, այլև հեռավոր շեն գաղութներում: Եվ ով
է, որ պիտի երևան հանի այս հանգամանքը և ի սպաս դնի հայ դատին, եթե
ուչ ինքը՝ հայ բուրժուազիան կանոնավոր կազմակերպության միջոցով: Այս-
պիսով է, որ պիտի հրապարակ հանվի, որ հայ հայրենիքի քաղաքական բախ-
տը սահմանելիս ի նկատի ունենալու է նաև նրա վտարանդի որդիների ուժն
ու կարողությունները, նրանց ամբարած մտավոր և նյութական հարստություն-
ները, որ գլխավոր հենարաններն են լինելու մեր հայրենիքի վերականգնման,
քաղաքական և տնտեսական բարգավաճման:

Այլև նույն արտասահմանյան կազմակերպյալ հայ առևտուրն ու արդյու-
նաբերությունն է, որ կարող է իր ծանրություն քարը նետել տնտեսական և
առևտրական այն հաշվեկշռի մեջ, որ ստեղծում է եվրոպական դիվանագի-
տություն մեջ այս կամ այն տրամադրությունները հայկական հարցի հանդեպ:
Հայտնի է, որ միջին դարերից ի վեր Արևելքի և մասնավորապես Առաջավոր
Ասիայի ազնվագույն ապրանքներն, ինչպես մետաքս, բամբակ, բուրդ, գո-
հարեղեն, կերպասներ, ծխախոտ, մրդեղեն հայ վաճառականության միջոցով
է արտահանվել եվրոպական շուկաները, այժմս էլ շնայելով բոլոր քաղաքա-
կան և այլ աննյաւստ պայմաններին, հայերի մասնակցությունը այդ մթերք-
ների առևտրի մեջ աննշանակ չէ: Եթե հաշվելու լինենք նավթի, պղնձի և մար-
մանեցի արդյունաբերությունն ևս, կարող ենք վստահել, որ հայի նշանակու-
թյունը պետք է ավելի բարձր գնահատել: Արդ՝ հայն իբր սոսկ առևտրական
միջնորդ եվրոպացիների համար, կարո՞ղ է այս կամ այն շափով ազդեցություն
ունենալ համապատասխան պետությանց տնտեսական քաղաքականության
վրա Արևելքում: Որքան էլ հոռետես լինենք մեր հիշած ուժերի նկատմամբ,
նրանք համենայն դեպս ավելի արժեքավոր են, քան այն տնտեսական վեճերը,
որ տեղի են ունենում օրինակ Հայաստանի շուրջը և հայ առևտրականության
ձայնը անհետևանք չպիտի անցնի եվրոպական դիվանագիտության մեջ: (Բե-
րենք մի օրինակ, Մանչեստրի և Լոնդոնի 150-ի շափ հայ առևտրական տների
լուման անգլիական մահողեղենի արդյունաբերության գործում խիստ արժե-
քավոր է, քանի որ նրանք մեծամասամբ բամբակի առևտրով են զբաղվում,
և նրանց միասնական դիմումն անգլիական կառավարության, թե Կլիվիայի
հարցի այս կամ այն վճիռը պիտի որոշ ազդեցություն ունենա իրենց առևտրի
վրա, կրկնում եմ, այսպիսի դիմումը ավելի նշանակություն պիտի ունենար

անգլիական դիվանագիտության համար, քան մեր աղերսագրերը և մարդասիրական կոչերը և պատմական իրավունքները):

Կես դար է², որ մեր արդար դատը միայն արյուն է բերում մեզ, կես դար է, որ մեր բոլոր գործուն ուժերը, կենսունակ և անձնվեր երիտասարդությունը, ամբողջ ժողովուրդը ողջակեզ եղավ մեր դատին և ոչնչի հանգեցանք: Դարձյալ մտամուրթը և հուսաբեկ կանգնած ենք նույն պրորբլեմի առաջ: Գործունեության եղանակը փոխել կամ նույնը ճոխացնել նոր գործելակերպով — անժխտելի անհրաժեշտություն է: Նոր գործելակերպը պիտի ծագե մինչև այժմ մեկուսացված, մեզ համար ամուլ, բայց ինքնըստինքյան զորեղ դասակարգից. նրա լծակը լինելու է մեր առևտրի և արդյունաբերության ներկայացուցիչներին կուռ շաղկապը:

Անհիմն հոռետեսությունը նույնչափ արատավոր է, որչափ և ավելորդ շատախոսությունը: Միտ դնելու է ամեն գործունեության սկզբում, որ առողջ հիմքերի վրա դրված գործը երբեք անպտուղ չի անցնում, եթե նույնիսկ բոլոր ակնկալիքը չի արդարացնում: Մեր առջև ունենք կենդանի օրինակ, որ կարող է մեզ խրախուսել և ոգի տալ: Գաղտնիք չէ, որ հրեական կապիտալը ոչնչից ստեղծեց Պաղեստինը³: Հայ կապիտալը պիտի զլխավոր նեցուկը լինի նոր Հայաստանի: Հարկավ, տարբեր են մեր և նրանց կապիտալների արժեքը, բայց տարբեր է նաև Հայաստան և Պաղեստին ստեղծելու գործը: Մեկն արդեն գոյություն ունի, կենդանի մարմին է, իսկ մյուսն ստեղծվելու է գրեթե ոչնչից: Մեր հարցը դյուրին է նույնչափով, որչափ թույլ մեր կապիտալը:

Մոռանալու չէ նաև այն, որ ինչ և լինի առաջարկածս կազմակերպության ազդեցությունը հայկական հարցի վերաբերմամբ, սորանով չէ, որ պիտի սահունանափակվի նրա գործունեությունը և արդարացվի նրա գոյությունը: Հայ արդյունաբերողների և առևտրականների միությունը համահավասար է հայ գաղութների միության գաղափարին: Հայ գաղթավայրերի նյութական և բարոյական ուժերի շաղկապումը և նրանց միասնական գործունեությունը ինքնըստինքյան մի մեծ ձեռնարկ է, որ խոստանում է նոր զարկ տալ մեր կյանքին և այլ շափեր մտցնել մեր մտավոր և կուլտուրական անդամատանի մեջ:

Գործի նախաձեռնությունը առնելու են իրենց վրա Լոնդոնի և Փարիզի մեծատունները: Բավական է, որ մի քանի հայտնի և ազդեցիկ մարդիկ առևտրի և արդյունաբերության աշխարհից հրապարակ նետվեն և կազմեն ծրագրյալ կազմակերպության կորիզը: Կարճ ժամանակամիջոցում նրանց շուրջը կբույրեն ուրիշները՝ արձագանք տալով մոտիկ և հեռու վայրերից: «Հայ առևտրականների և արդյունաբերողների միության կենտրոնական կոմիտե» անվամբ անմիջապես քայլեր կարելի կլինի անել Հայկական հարցի նկատմամբ, որոնց կուլթյան մասին խոսվելու է, երբ գործի մարմնա[նա]լու նշանները հրապարակ կգան:

«ՀԱՅ ԱՌԵՎՏՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

1. Հաստատված է «Հայ առևտրականների և արդյունաբերողների միության» կենտրոնական կամ կազմիչ մարմին (անդամների թիվը և ընտրության նշանակը որոշելու է կամ Փարիզ և Լոնդոն գտնվող առևտրականների ընդհանուր ժողով գումարելով և կամ նախաձեռնողների ուրույն հայտարարությամբ):

2. Կենտրոնական մարմինը կոչ է անում ամենուրեք անդամագրվել և կամ հիմնադրի գառնալ զանազան գաղթավայրերում:

3. Անդամների նկատմամբ «Միությունը» ունենալու է Առևտրական պա-

լատի նշանակութիւնն և կատարելու է իրեն հատուկ գործեր՝ տալով դյուրութիւններ, ստուգելով և հետևելով հայ առևտրի և արդյունաբերութեան զարգացմանը և թիրևս նպաստելով դրան: Ինչպես նաև հավաքելով բոլոր այն տեղեկութիւնները, որոնք կարող են նյութ լինել նրա պատմութեանը:

4. «Միութեան» գլխավոր նպատակն է լինելու զարկ տալ հանրագոտ գործունեութեանը՝ հայ կյանքի բոլոր ճյուղերում:

5. «Միութեան» միջոցները գումարվելու են զանազան աղբյուրներից՝ ա) անդամավճար, բ) պարտավորյալ և հոժարակամ տուրք առևտրական շրջանառութիւնից, գ) նվիրատվութիւնը, դ) կտակներ և այլն:

«Հայ առևտրական և արդյունաբերական միութեան» Կենտրոնական կոմիտեի կամ մարմնի տնօրէն գործը լինելու է իր նպաստը բերել հայկական դատին, ներկայացնելով լուրջ հիշատակագիր Գերագույն խորհրդին⁴, մի հիշատակագիր, որ լրիվ պատասխան է տալու հարցի շուրջը ծագած դժվարութիւններին:

Հիշատակագրի էական կետերն են լինելու՝

1. Հայաստանն անջատվելու է Թուրքիայից նույն նկատմամբ, ինչ որ եղել է Միջագետքի⁵ և Սիրիայի անջատման ժամանակ: Ինչպես որ սրանք թուրքական բնակչութիւն չունեն, այնպես և Հայաստանը, որի ժողովուրդը հայ և քուրդ տարրերից է բաղկացած: Հետևապես թուրքական լուծը այստեղ պահելը անպատեհութիւն է այս տեսակետից:

2. Հայաստանի սահմանների և փոխստական բնակչութեան դարձի շուրջը եղած վեճերի սպառիչ բացատրութիւն: Նույնիսկ վիլսոնյան սահմաններում⁶ կարող ենք տալ բնակչութեան այնպիսի խտութիւնը, որպիսին տեղի ունի Անատոլիայի ներքին վիլայեթներում⁸: Ավելին պահանջել Հայաստանից անարդարութիւն է:

3. Հայ պետութեան անկենսունակութեան կասկածներն անհեթեթութիւնն է, որքան և անկենսունակ, այն ավելի զոհացուցիչ պիտի լինի, քան թուրքական ռեժիմի ստեղծած կացութիւնը: Խնդրին պետք է մոտենալ ոչ թե եվրոպական շահանիշով, այլ թուրքական:

4. Հարկավոր ժանդարմների (մոտ 4—5000 հոգի) և նրանց պահպանութեան ծախսը իր վրա է առնում Միութիւնը:

5. Ֆինանսական դժվարութիւնները հարթելու համար Միութիւնն սկսած կարող է երաշխավորել պետք եղած փոխառութիւն պետութիւնների կողմից:

6. Հայ պետութեան պաշտոնեութեան կազմակերպութեան գործում ևս Միութիւնը բերում է իր նպաստը:

Մանրագրութիւններ

1 Հայ վաճառականութեան գիտական պատմութիւնն այսօր էլ կարող է ամբողջական ու լուրջ հետազոտութեան, թերևս կարելի է մատնանշել Լեոյի, Ա. Գ. Հովհաննիսյանի, Լ. Ա. Նաչիկյանի, Հ. Դ. Փափազյանի, Վ. Ա. Բայրությանի, Հ. Ղ. Միրզոյանի, Օ. Լ. Նաչիկյանի և այլոց առանձին ուսումնասիրութիւնները:

2 Սույն արտահայտութիւնը վկայում է, թե հոգիածը գրվել է 20-ական թվականների կեսերին:

3 Պաղեստինի տարածքում հրեական պետութեան ստեղծման գործում մեծ դեր են խաղացել ոչ միայն հրեական կապիտալն ու սիոնիզմի գաղափարախոսութիւնը, այլև մեծ տերութիւնները՝ հատկապէս Անգլիան, իսկ հետագայում նաև ԱՄՆ-ը:

4 Ակնարկում է Ազգերի լիգայի ղեկավար մարմինը՝ լիգայի գերագույն խորհուրդը:

5 Մինչև 1920 թ. Իրաքի տարածքը պաշտոնապէս անվանվում էր Միջագետք, հետևաբար հեղինակն այստեղ նկատի ունի Իրաքը:

6 «Վիլսոնյան սահմանները»,— նկատի ունի ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի՝ 1920 թ. նոյեմբերի 22-ի որոշմամբ նախատեսվող հայկական պետութեան սահմանները: Ըստ այդ

որոշման, Արևմտյան Հայաստանի տարածքը կազմելու էր 40.000 քառակուսի մղոն. և ունենալու էր հարմար ելք դեպի ծով:

7 Ըստ Ն. Ադոնցի հաշվարկների, տարագիր հայության վերադարձից հետո Արևմտյան Հայաստանում մեկ քառակուսի կիլոմետրի վրա կարելի էր ապահովել միջին խտություն, այսինքն՝ 17 մարդ (տե՛ս Ն. Ադոնց, Հայկական հարցի լուծման շուրջ, էջ 80):

8 Ըստ թուրքական վիճակագրական տվյալների, 1920-ական թվականներին Անատոլիայի ներքին վիճակներում բնակչության խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա կազմում էր 10—15 մարդ:

П. О. ОГАНЕСЯН — Вновьнайденная статья Никогоеса Адонца об армянском вопросе.— Совсем недавно широкой и научной общественности удалось ознакомиться с посвященными армянскому вопросу работами Никогоеса Адонца—выдающегося историка, византолога и филолога. К числу таковых относится и публикуемая статья «Одна из внутренних сторон армянского вопроса». По всей вероятности, она писалась в середине 20-х годов, сразу после Лозаннской конференции, и выражает тревогу и озабоченность армянского ученого и гражданина судьбой своего народа. Автограф статьи хранится в фонде Никогоеса Адонца Общенационального литературного хранилища Бейрута. Оригинал печатается лишь с некоторыми пунктуационными исправлениями.